

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N: 2

ՀՀՏԿԵՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/44 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ջրային հոսքերի կարգավորման փականի և պտտվող սկավառակով փականների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

28 հուլիսի 2020 թ.
Ժամը. 11:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝

Մ. Առաքելյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)

Անդամներ՝

Կ. Գրիգորյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)

Գ. Խոսրովյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)

Ա. Գևորգյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)

Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)

Հանձնաժողովի քարտուղար

Կ. Բարսեղյան (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

Գնահատող հանձնաժողովի նիստի օրակագի մասին

(Մ. Առաքելյան)

Հաստատել գնահատող հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը:

1. Ջրային հոսքերի կարգավորման փականի և պտտվող սկավառակով փականների գնման ընթացակարգի վերաբերյալ ստացված հարցման մասին պարզաբանում տրամադրելու վերաբերյալ:
2. Հրավերի պարզաբանման մասին հայերեն և ռուսերեն լեզուներով հայտարարությունների տեքստերի հաստատման մասին:

Ընդունվել է որոշում կողմ- 5, դեմ-0

1. Ջրային հոսքերի կարգավորման փականի և պտտվող սկավառակով փականների գնման ընթացակարգի վերաբերյալ ստացված հարցման մասին պարզաբանում տրամադրելու վերաբերյալ

(Մ. Առաքելյան)

2020 թվականի հուլիսի 25-ին ժամը 12:11 www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերությունը հարցում է ներկայացրել ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/44

ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ և խնդրում է պարզաբանել՝

Չափաբաժին 1 : Ջրային հոսքերի կարգավորման փականների (CPV - 42131170/509)

տեխնիկական բնութագրի 18-րդ կետով, որպես խցուկային նյութերի այլընտրանքային կիրառման հնարավորություն նշված է բրոնզ:

Խնդրում եմ պարզաբանել թե ո՞ր հանգույցի համար է դիտարկվում, որպես այլընտրանք բրոնզը:

Չափաբաժին 2: Պտտվող սկավառակով փականների (CPV - 42131290/501) տեխնիկական բնութագրի 4-րդ կետով պահանջվում է՝

-խցուկը (уплотнение)- կոռոզիակայուն պողպատ ոչ պակաս SS 304 պողպատի մեխանիկական բնութագրերով (խցուկ մետաղը մետաղի հետ, ամբողջամետաղական):

Համափոխարինելի՞ է արդյոք տեխնիկական բնութագրում նշված խցուկին՝ փականի տվյալ հանգույցում ст.08X18H10 (AISI 304) մակնիշի կոռոզիադիմացկուն պողպատի և գրաֆիտի համադրությամբ խցուկի կիրառումը :

Նշեմ որ տվյալ տիպի խցուկների կիրառումը լայնորեն տարածված է ջրամատակարարման համակարգերի համար նախատեսված փականներում և համապատասխանում է փականների հերմետիկության ստանդարտներին՝ ГОСТ 9544-2005 (ISO 5208:2008); ГОСТ Р 54808-2011 (ISO 5208:2008*); ГОСТ 9544-93:

Չափաբաժին 2: Պտտվող սկավառակով փականների (CPV - 42131290/501) Տեխնիկական բնութագրի 5-րդ կետով պահանջվում է՝

- Լիսեռ-իրան հանգույցի, հերմետիկացումը-ֆտորպլաստ/գրաֆիտ

Համափոխարինելի՞ է արդյոք փականի վերոնշյալ հանգույցում հերմետիկացումն իրականացնել գրաֆիտե ժապավենային խցուկի (сальник графитовый шнур) կիրառմամբ :

Համապատասխանում է փականների հերմետիկության ГОСТ 9544-2005 (ISO 5208:2008); ГОСТ Р 54808-2011 (ISO 5208:2008*); ГОСТ 9544-93:

Գնահատող հանձնաժողովը քննարկման արդյունքում մասնակցի կողմից տրված հարցումների վերաբերյալ տրամադրեց հետևյալ պարզաբանումներ՝

Չափաբաժին 1: Ջրային հոսքերի կարգավորման փականների (CPV - 42131170/509) տեխնիկական բնութագրի 18-րդ կետով, որպես խցուկային նյութերի այլընտրանքային կիրառման հնարավորություն նշված է բրոնզ՝ իլ (шпиндель) – իրան հանգույցի համար:

Չափաբաժին 2: Պտտվող սկավառակով փականների (CPV - 42131290/501) տեխնիկական բնութագրի 4-րդ կետով պահանջվող խցուկը (уплотнение) պետք է լինի մետաղը մետաղի հետ, ամբողջամետաղական, նշված կոռոզիադիմացկուն պողպատի և ֆտորպլաստի համադրությամբ (SS304+PTFE):

Չափաբաժին 2: Պտտվող սկավառակով փականների լիսեռ-իրան հանգույցի՝ գրաֆիտե ժապավենային խցուկի (сальник графитовый шнур) կիրառմամբ հերմետիկացումը թույլատրելի չէ:

Ընդունվել է որոշում կողմ-5, դեմ-0

2. Հրավերի պարզաբանման մասին հայերեն և ռուսերեն լեզուներով հայտարարությունների տեքստերի հաստատման մասին:

(Մ. Առաքելյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հաստատել ՀՀՏԿԵՆԶԿ-Զ-ԳՀԱՊՁԲ-20/44 ծածկագրով գնանշման հարցման հրավերի պարզաբանման մասին հայերեն և ռուսերեն լեզուներով հայտարարությունների տեքստերը:

Ընդունվել է որոշում կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝


Մ. Առաքելյան

Անդամներ՝



Կ. Գրիգորյան


Գ. Խոսրովյան


Ա. Գևորգյան


Ն. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար


Կ. Բարսեղյան